Շատ մարդիկ շոկի մեջ են, քանի որ սա ապշելու աստիճան անսպասելի թիվ էր: Այդ տրամադրությունները ոնց մեկ գիշերում կոտրեցին՝ ես չեմ կարող բացատրել, բայց ունենք փաստ՝ 49,83 տոկոս: Ու ես հուսով եմ, որ ընդդիմությունն ինչ-որ ձեւով կկարողանա այդ փաստը հերքել: Հակառակ դեպքում դա վերլուծության ենթակա չէ:

Կարդացեք՝ էջ 4

Վրաստանի վարչապետը շնորհավորեց այն ժամանակ, երբ հաշվարկն ընթացքի մեջ էր: Ես չեմ ուզում դա կապել այն տեղեկությունների հետ, որ Լոռու մարզից Վրաստանին տարածքներ պետք է հանձնվեն: Ես չգիտեմ, թե որն էր Կոբախիձեի այդ քայլի մոտիվացիան, սակայն ինձ համար հասկանալի է, թե որն է եվրոպական լիդերների մոտիվացիան:

Կարդացեք՝ էջ 7

Այժմ եկել է կոնկրետ գործողությունների ժամանակը: Ադրբեջանը հստակ ձեւակերպում է իր ակնկալիքները՝ Հայաստանից: Նախ, հայկական տարածքում գտնվող բոլոր կառույցները, մնացորդները եւ տարրերը, որոնք կապված են Ղարաբաղի հետ, պետք է լիովին վերացվեն՝ ինչպես պաշտոնական, այնպես էլ ոչ պաշտոնական հաստատությունները:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 92 (4227), 10 հունիս, չորեքշաբթի, 2026

www.hraparak.am

Փորձեցինք ԿԸՀ-ից պարզել, թե որ ընտրատեղամասերում են քվեարկության մասնակցել զինծառայողները: Ասացին, որ զինծառայողների մասնակցության վերաբերյալ որեւէ տեղեկատվություն հրապարակման ենթակա չէ: Բաց աղբյուրներում հրապարակված տվյալների համադրությամբ պարզեցինք, թե, օրինակ, Սոթքում քանի զինծառայող է մասնակցել ընտրության: Ընտրություններից մեկ շաբաթ առաջ ՆԳՆ-ն հրապարակել էր ընտրողների թվերը՝ ըստ ընտրատեղամասերի: Ըստ այդմ՝ Գեղարքունիքի մարզի Սոթք բնակավայրում (20/56 ընտրատարածք) ընտրելու իրավունք ուներ 695 ընտրող, ԿԸՀ տվյալների համաձայն՝ այս տեղամասում ընտրությանը մասնակցել է 1183-ը, որից 517-ը՝ ընտրողների հիմնական ցուցակից: Մնացած 666-ը զինվորների ու նույն օրը դատական կարգով ընտրական իրավունք ստացած ընտրողների թիվն է: Ընդ որում, Գեղարքունիքի մարզում ընտրական իրավունք ստանալու համար դատարան դիմել է ընդամենը 4 անձ: Իսկ քվեարկության արդյունքները Սոթքում բաշխվել են այսպես. «Ռեֆորմիստներ»-ի օգտին քվեարկել է 1 անձ, «Բոլորին դեմ եմ»՝ 15, «Ուժեղ Հայաստան»՝ 177, Հայաստանի շնորհապետական կուսակցություն՝ 4, «Նոր ուժ»՝ 19, «Միասնության թեւեր»՝ 13, «Բարգավաճ Հայաստան»՝ 73, ԱԺԲ՝ 4, Քոչարի ազգային վերածնունդ եւ զարթոնք կուսակցություն՝ 3, ՀԱԿ՝ 1, «Հանրապետություն»՝ 3, Քրիստոնեա-ժողովրդավարական կուսակցություն՝ 1, «Ժողովրդավարական համախմբում»՝ 2, ԴՕԿ՝ 4, «Հայաստան» դաշինք՝ 115, «Հանուն հանրապետության»՝ 5, ԼՀԿ՝ 7: Այս ընտրատեղամասում ՔՊ-ն ստացել է 718 քվե: Այսինքն՝ 447-ն ընտրել է մյուս 17 ուժերին, անվավեր է եղել 19 քվեաթերթիկ: Նշանակում է՝ եթե 666 զինվոր չմասնակցեր ընտրությանը, ՔՊ-ն այս ընտրատեղամասում ջախջախիչ պարտություն կկրեր՝ ստանալով հազիվ 10-20 ձայն:



Չնայած նոր խորհրդարանը դեռ չի ձեւավորվել, սակայն ՔՊ-ի ներսում սկսել են պաշտոնները բաժանել: Նախընտրական ցուցակի առաջին 30-35 համարները հաստատ գործուղվելու են խորհրդարան, թեժ պայքար է ընթանում հատկապես Ազգային ժողովի նախագահի պաշտոնի համար: ՔՊ-ում կարծում են, որ «ամենաարժանի» թեկնածուն Հայկ Կոնջորյանն է, Ալեն Սիմոնյանը պետք է լքի պոստը: Չնայած Ռուբեն Ռուբինյանն էլ է հավակնում այդ պաշտոնին եւ քիչ չի «ծառայել», սակայն ՔՊ-ում կարծում են, որ նա կոնֆլիկտային խառնվածք ունի եւ չի կարող կոռեկտության սահմաններում մնալ ու բոլորի հետ հաղորդակցվել: Լիլիթ Մակունցի տարբերակն ամբողջությամբ դուրս չի եկել, բայց քիչ հավանական են համարում:

Անիծյալ աթոռ

Հայ ժողովուրդը ոչ մի կերպ չի կարողանում ճեղքել անարդար, կեղծված ընտրությունների արատավոր շղթան եւ մեկ անգամ արդար ընտրությամբ իշխանափոխություն իրականացնել: Այն, ինչ շատ ազգերի բազմիցս հաջողվել է, եւ ինչի արդյունքում պետությունները զարգանում են: Եթե 1996 թվականին Լեւոն Տեր-Պետրոսյանն իր մեջ ուժ գտներ եւ արդար ընտրություններ կազմակերպեր, թույլ չտար իր թիմակիցներին՝ կեղծիքներ անել: Եթե Ռոբերտ Քոչարյանն իր մեջ ուժ գտներ եւ 1998-ին նախագահի պաշտոնում չառաջադրվեր՝ ենթարկվելով Սահմանադրության պահանջին: Եթե Սերժ Սարգսյանը 2008-ի ընտրությունների արդյունքում խաղաղ զիջեր իր տեղը Տեր-Պետրոսյանին, իսկ 2015-ին Սահմանադրությունը չփոխեր կամ գոնե 2018-ին իշխանությունը հանձներ Կարեն Կարապետյանին, մենք այսօր չէինք ունենա Նիկոլ-վարչապետ եւ չէինք ունենա 2026-ի այս խայտառակ ընտրությունները: Երկրի ղեկավարի աթոռը մեզանում, իհարկե, շատ արագ է մարդուն փչացնում: Որքան էլ նա գիտական շրջանակներից սերված լինի, պատերազմի բովով անցած լինի, ժողովրդի կողմից ընտրված լինի, բազում խոստումներ ու երդումներ տված լինի, թե՝ ընտրությունները չեմ կեղծելու, երբ գալիս է ընտրվելու պահը, իշխանություն ունեցող անձը կորցնում է բարոյականությունն ու չափի զգացումը, պարկեշտությունն ու պետության հանդեպ հարգանքը: Մնում է միայն մի անզուսպ ցանկություն՝ ամեն գնով վերընտրվելու: Իշխանությունը կորցնելու վախը նրան մղում է ամենաստոր արարքների ու մեղքերի: Այնպես, որ նրանից ազատվելու համար հանրությունը սկսում է պատեպատ խփվել, անօրինական ճանապարհներ փնտրել, անիծել ու Աստծո պատիժ երազել՝ աթոռից կառչած էակի համար: Ինչպե՞ս անել, որ իշխանական աթոռից հրաժարվելը չլինի այդքան դժվար, ինչպես ներդնել ընտրությամբ հեռանալու ավանդույթը:

Հունիսի 7-ի ընտրությունների արդյունքները հատկապես շառաչուն ապտակ էին «զորավար» Սուրեն Պապիկյանի համար, որի հայրենի Լոռիում, մասնավորապես՝ Ստեփանավանում, Սամվել Կարապետյանի «Ուժեղ Հայաստան» կուսակցությունը ջախջախիչ հաղթանակ է տարել: Դիցուք, Ստեփանավան համայնքի 25/31 ընտրատեղամասում ընտրությանը մասնակցած 757 ընտրողից 744-ն իր քվեն տվել է «Ուժեղ Հայաստան»-ին, 8-ը՝ ՔՊ-ին: Ստեփանավանում «Ուժեղ Հայաստան»-ը բացարձակ հաղթանակ է տարել բոլոր 13 ընտրատեղամասերում՝ առաջ անցնելով մյուս ուժերից: Սա՝ այն դեպքում, երբ այս համայնքը, կարելի է ասել, Պապիկյանի ու նրա գերդաստանի «վոտչինան» է՝ նրանց տոտալ վերահսկողության ներքո, եւ համայնքային բոլոր առանցքային ու ոչ առանցքային պաշտոններում, մինչեւ անգամ մաքրուհի աշխատելու համար Պապիկյանի «դաբրոն» է հարկավոր: Նրա ազգուտակն ու ծանոթ-բարեկամներն են ամենուր պաշտոններ զբաղեցնում: Անգամ ՔՊ-ում են շոկի մեջ ընկել այդ արդյունքներից եւ Պապիկյանին ակնարկել են, որ զրո հեղինակություն ունի:

ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ԱՆՀԱՆԳԻՍՏ ԵՆ

Չնայած Հայաստանում տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների արդյունքները դեռ ճշտվում են, ու պարզ չէ՝ ԲՀԿ-ն կանցնի խորհրդարան, թե՝ ոչ, սակայն մի բան փաստ է, որ, անկախ փոփոխություններից, ՔՊ-ն չունի եւ չի ունենալու սահմանադրական մեծամասնություն, հետեւաբար, չի կարող մենմենակ կատարել Բաքվի տնային առաջադրանքը՝ Սահմանադրությունը փոխելու, հանրաքվե անելու վերաբերյալ: Այս փաստն անհանգստություններ է առաջացրել Ադրբեջանում, ավելին՝ խորհրդարանական ընտրությունների արդյունքների վերաբերյալ Բաքվի լրատվամիջոցներում արդեն էյֆորիան պակասել է, եւ անդրադարձներ կան այն մասին, որ Փաշինյանի խոստացած խաղաղության պայմանագիրը կարող է «գրվել սառույցին»: «Այժմ, առանց սահմանադրական փոփոխությունների, Փաշինյանը չի կարողանա խաղաղության պայմանագիր ստորագրել կամ դիվանագիտական հարաբերություններ հաստատել Բաքվի հետ եւ կարող է միայն որոշակի քայլեր ձեռնարկել առեւտրի եւ տրանսպորտի ոլորտներում»,- գրում են որոշ ադրբեջանցի վերլուծաբաններ:

ԱՆԳԱՄ 90-ԱԿԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՅՍ ԿԱՐԳԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐՈՎ ՉԷԻՆ ԶՈՒԳՈՐԴՎՈՒՄ

*«Հրապարակի» զրուցակիցը նախկին դատավոր, Դատավորների միության նախագահ **Ալեքսանդր Ազարյանն** է:*

- Նիկոլ Փաշինյանը շարունակում է սպառնալ ընդդիմադիր գործիչներին, նախընտրական փուլում, առհասարակ, անզուսպ է դարձել նրա խոսույթը, անգամ որոշել է, որ երեք ընդդիմադիր առաջնորդները պետք է բանտարկվեն, եւ նույնիսկ ազատազրկման ժամկետ է նշում՝ տասը տարի: Դրանից առաջ էլ խոստանում էր ուեզրկել Գագիկ Ծառուկյանին, պետականացնել նրա առանձնատունը, գործարանները, այն պարագայում, երբ Ծառուկյանը երբեք պետական պաշտոն չի զբաղեցրել: Որպես նախկին դատավոր՝ ինչ գնահատական կտաք այս հայտարարություններին:

- Նիկոլ Փաշինյանն այնքան անհեթեթ հայտարարություններ է արել այս ութ տարիների ընթացքում, որ ես պարզապես դադարել եմ զարմանալ նրա հերթական անհեթեթ հայտարարություններից: Նա ստանձնել է դատավորի, քննիչի ու դատախազի դեր՝ մոռանալով, որ չի կարող որեւէ դատավճիռ որոշել: Անգամ իրավաբանական ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողները կարող են գնահատական տալ այս պրոցեսին: Անձը միայն մեղավոր է ճանաչվում դատարանի՝ ուժի մեջ մտած դատական ակտով, մնացյալ որեւէ պարագայում նման հայտարարություններ անելն անթույլատրելի է: Այս պարզ գիտելիքին տիրապետում են անգամ չկայացած իրավաբանները:

- Բայց իրավապահ համակարգը, դատարանները ծայրաստիճան հնազանդ են ու խելոք կատարում են նրա հրահանգները, կարծես այդպես էլ պետք է լիներ: Օրինակ՝ Փաշինյանի այն հայտարարությունից հետո, երբ նա պնդեց, որ «Արարատ ցեմենտը» պետք է պետականացնել՝ այն խլելով Ծառուկյանից, անմիջապես ժամեր անց գործ հարուցվեց, եւ դատախազությունը մի բոցաշունչ հաղորդագրություն տարածեց այդ մասին: Երեկ էլ մեղադրանք են առաջադրել Ծառուկյանին՝ հարկերից խուսափելու համար:

- Ես չեմ զարմանում այս ամենից: Դա այսօրվա Հայաստանի բարքերից է, հիշենք, թե ութ տարի առաջ ինչ հայտարարություններ էին արվում Ռոբերտ Քոչարյանի գործի հետ կապված: Բազմահազարանոց հանրահավաք էին կազմակերպում եւ դատավճիռներ կարդում: Ուղղորդում էին դատարաններին, ավելի ճիշտ՝ հրահանգում, որպեսզի Ռոբերտ Քոչարյանի գործով կայացվեն համապատասխան որոշումներ: Ես դեռ այն ժամանակ, երբ գործող դատավոր էի, այդ երեւույթը որակել էի որպես ճնշում, թեպետ կաշկանդված էի՝ դատավորի էթիկայի առումով, սակայն չեմ լռել եւ անդրադարձել եմ այդ խնդրին՝ պնդելով, որ կատարվածն անթույլատրելի է: Ութ տարվա ընթացքում ոչինչ չի փոխվել՝ դրական առումով, Փաշինյանը եւ նրա թիմակիցներն իրենց թույլ են տալիս դատավճիռներ կարդալ, մարդկանց անմեղության կանխավարկածը հաշվի չառնել, եւ այդ ամենը եվրոպական կառույցների կողմից չի արժանանում համապատասխան գնահատականների: Ինչո՞ւ եմ հատկապես նշում եվրոպական կառույցներին, որովհետեւ նրանք են դեմոկրատիայի ջատագովները եւ նրանք են, որ պետք է մտահոգվեն այս հակադեմոկրատական քայլերով: Թե գործնականում, թե հայտարարությունների մակարդակով փաստացի Փաշինյանը չի արժանացել միջազգային կառույցների գնահատականներին:

- Ավելին՝ եվրոպական երկրների ղեկավարները, իրար հերթ չտալով, շնորհավորում են Նիկոլ Փաշինյանին, խայտառակ ընտրակեղծիքների, վախի մթնոլորտ ստեղծելու, ապօրինի քայլերի ու քվեներ նկարելու կապակցությամբ....

- Այո, դե գուցե դա է դեմոկրատիան արդեն, ուղղակի մենք լավ չենք հասկանում:

- Արձանագրեցիք, որ ոչ մի դրական տեղաշարժ չի եղել այս ութ տարիների ընթացքում, իսկ բացասական ինչ փոփոխություններ կան դատաիրավական համակարգում:

- Բացասական փոփոխություններն այնքան շատ են, որ եթե հերթով դրանք թվարկեմ, մի ամբողջ օրը չի բավականացնի: Դրանք անասելի շատ են: ԲԴԽ-ի աշխատանքին առնչվող հարցեր, դատավորների նշանակումներ, ու այսպես շարունակ, ամենուր միայն ձախողումներ ու օրենքի խախտումներ են:

- Այս ամենը, ըստ Ձեզ, ընտրական պրոցեսների վրա թողած ազդեցություն. ռեպրեսիաներ, վախի մթնոլորտ, դատական համակարգը որպես իշխանական մահակ կիրառելու դրսեւորումներ եւ այլն:

- Հետեւում եմ հետընտրական զարգացումներին, ես իմ կյանքում նման ընտրություններ չեմ հիշում: Անգամ 90-ականների ընտրություններն այս կարգի խախտումներով չէին զուգորդվում: Ես, իհարկե, դիտորդ չեմ, ոչ էլ՝ վստահված անձ, սակայն հետեւում եմ հրապարակումներին, ընդդիմադիր ուժերը բավականին պատրաստված էին, տեսանկարահանում էին: ԵԱՀԿ-ն մեծաթիվ խախտումներ է արձանագրել, ես պատկերացնում եմ, թե ինչքան շատ են դրանք եղել, եւ ընդամենը մի մասն են կարողացել արձանագրել: Այս ամենի ֆոնին ես ուզում եմ շնորհակալություն հայտնել անկախ լրագրողներին, նրանք մեծ աշխատանք կատարեցին:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՀ-ՈՒՄ «ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՈՒՄՈՎ» ԱՎԵԼԻ ՇԱՏ ԳՈՐԾ Է ՀԱՐՈՒՑՎԵԼ, ՔԱՆ ԵՄ-ՈՒՄ

Դակակոռուպցիոն դատարանը՝ դատավոր Արամ Գրիգորյանի նախագահությամբ, ընտրությունների թեժ փուլում՝ հունիսի 6-ին, մեկ ամսով կալանավորեց ՀՅԿ փոխնախագահ, ԿԳ նախկին նախարար Արմեն Աշոտյանին՝ շուրջ 10 տարվա վաղեմության մի գործով, որի շրջանակներում երկար ժամանակ որեւէ քննչական գործողություն չի իրականացվել, իսկ վերջին հարցաքննությունը եղել է 2019-ի վերջին: Նույն գործի շրջանակներում քրեական հետապնդում է հարուցվել 7 անձի նկատմամբ՝ Արմեն Աշոտյանի, ՊԵԿ նախկին նախագահ Գագիկ Խաչատրյանի եւ նրա որդու՝ Արտյոմ Խաչատրյանի, պաշտպանության նախկին նախարար Վիգեն Սարգսյանի, Բրյուսովի անվան համալսարանի նախկին ռեկտոր Գայանե Գասպարյանի, Արթուր Այվազյանի եւ Հարություն Թադեւոսյանի նկատմամբ: Ըստ Քննչական կոմիտեի՝ նրանք, պաշտոնեական դիրքի չարաշահմամբ, կազմակերպել են կոռուպցիոն սխեմա, որի արդյունքում Երեւանում գտնվող 451.1 քմ մակերեսը, որը դատախազությունը գնահատել է շուրջ 208 մլն դրամ, փոխանցվել է մասնավոր անձանց: Հետագայում գույքը վաճառել են, ապա գրանցել Արտյոմ Խաչատրյանի անունով:

Արմեն Աշոտյանի փաստաբան **Տիգրան Աթանեսյանը** «Հրապարակ»-ի հետ զրույցում ասաց, որ 2019-ին իր պաշտպանյալը վկայի կարգավիճակով հարցաքննվել է. «Մոռացել էինք այս գործի մասին, ոչինչ չկա, այսպիսի մի քանի գործ կար 19 թվականին, հիմնականում կարճվել էին: Այս գործով, որով կալանավորեցին եւ հիմա դատում են, ինձ թվացել էր՝ կարճել էին, մոռացել էինք, ամբողջությամբ քնած գործ է եղել, եւ, չգիտես ինչու, արթնացրել են»: Աթանեսյանը դժվարացավ պատասխանել հարցին, թե ինչ է արել Աշոտյանը՝ ըստ իրավապահների, ասաց՝ ոչինչ գրված չէ գործում. «Վճարվել է պետական գույքի համար, որը գնացել է պետական բյուջե, ես չեմ կարող ասել՝ ինչ է արել, կարեւորը՝ թուղթ լինի ու պեչատ, թղթի բովանդակությունը կարեւոր չէ: Պետական գույքը է, օտարվել է եւ օտարվել է ավելի թանկ, քան արժեքն է, Աշոտյանի որոշումով չի օտարվել, օտարվել է կառավարության որոշումով: Քննիչին հարց ենք տալիս, ասում ենք՝ կարո՞ղ եք մատնացույց անել ապօրինի գույքը, որը «լվացվել» է, ասում է՝ ոչ: Եթե նախկին գործով մի բան մոգոնել էին, ստեղ ոչինչ չեն մոգոնել, ու ոչինչ չկա»: Ըստ փաստաբանի՝ նախկին պաշտոնյան որպես մեղադրյալ չի հարցաքննվել, բայց որպես վկա՝ նախկինում հարցաքննվել է, 6-7 էջանոց ցուցմունք է տվել. «Ինքը սովորական գործարք է, ոչ մեկը ոչ մի կոպեկ չի վերցրել, գույքը վաճառվել է թանկ գնով, ինչի՞ մասին է խոսքը, ես չեմ հասկանում: Սովորական վարչարարություն է, գոնե էժանով վաճառվեր, կասեինք՝ լավ, վնաս է պատճառվել: 2 անգամ փորձաքննություն է նշանակվել, եւ ավելի էժան գին է տրվել, քան վաճառվել է»:

Խոսելով վաղեմության ժամկետի մասին՝ նշեց. «Քանի որ վաղեմությունն անցած է, դատախազությունն ի՞նչ է անում, որտեղ պետք է, պետք չէ, անիմաստ փողերի լվացում է կպցնում, որ ժամկետների մեջ մնա, բոլոր գործերով են դնում: Ձեզ մի բան էլ ասեմ, որը ճշտված չէ, բայց վստահելի աղբյուրից է. ուրեմն 2 տարվա մեջ Հայաստանում ավելի շատ գործ է հարուցվել «փողերի լվացումով», քան Եվրամիության բոլոր երկրներում»:

Նյութերը՝ Աննա ՊԱՊԻԿՅԱՆԻ

Փաշինյանի աջակիցները հարձակվում են, ծեծում-ջարդում, մնում անպատիժ

Ընտրություններից առաջ եւ հենց ընտրության օրը տարբեր համայնքներում արձանագրված դեպքերի մասին տարածվել են բազմաթիվ տեսանյութեր ու հաղորդումներ, որոնցում երեւում են, որ Փաշինյանի աջակիցները ֆիզիկական բռնություն են գործադրում ընդդիմության ներկայացուցիչների նկատմամբ: Մասիսում հունիսի 2-ին բոլորը տեսան, թե ինչպես են ծեծի ենթարկում քարոզչություն իրականացնող անձանց, այդ թվում՝ կանանց: Հարձակվողները ՔՊ-ի աջակիցներ էին, ակտիվ ծեծողներից մեկը՝ ԵԿՄ Մասիսի կառույցի ղեկավարը: Քննչական կոմիտեն ասում է, որ դեպքի առթիվ ստացվել են հաղորդումներ, նախաձեռնվել է քրեական վարույթ՝ մի խումբ անձանց կողմից ֆիզիկական ներգործության, խուլիգանության եւ ընտրական գործընթացին խոչընդոտելու հոդվածներով՝ ստացվել է 3 հաղորդում: Ձերբակալված անձ կամ անձինք կմն. ՔԿ-ից բացասական պատասխան տվեցին. «Չկան»: Իհարկե, բռնություն գործադրողն ընդդիմության ներկայացուցիչը չէ, որ արդեն կալանավորված լիներ: Նույն պատկերը Լիճք համայնքի միջադեպով է, որտեղ Լիճքի վարչական ղեկավար՝ ՔՊական Սիրակ Սիրականյանը եւ նրա հարազատները հարձակվել էին «Ուժեղ Հայաստանի» վստահված անձի՝ Նաիրի Հոխիկյանի եղբոր վրա, երբ վերջինս հորդորել էր պահպանել ընտրական գործընթացի կանոնները: Այստեղ եւս կա քրեական վարույթ, սակայն ձերբակալված չկա: Այսինքն, միջադեպերն արձանագրվում են, վարույթներ են հարուցվում, բայց ոչինչ չի արվում, մինչեւ հանրային հետաքրքրությունը կմարի, եւ ծածուկ կարճեն այս վարույթները: Իսկ Արտուր Օսիպյանը, Արտակ Ավետիսյանը կալանավորվել են, եւ նրանց մեղքը միայն այն է, որ Փաշինյանին առարկել են, կոշտ քննադատել: Օսիպյանը 15 օրից ավելի հացադուլի մեջ է: Բազում հայտարարություններ են եղել՝ նրան ազատ արձակելու պահանջով: Բայց արդարադատությունը երկրում այլեւս մի մարդ է իրականացնում, իսկ նա իր ճանապարհին հայտնված մարդկանց չի ներում եւ պատժի մի ձեւ ունի՝ բանտ ուղարկելը:

Նարեկ Նալբանդյանի թռչնաֆաբրիկան բանվորների փողը չի տալիս

«Շիրակ» թռչնաֆաբրիկան, որը պատկանում է իշխանության սրտի օլիգարխ, «Պրոյեկտ Ինտեր Ինվեստ» ընկերությունների խմբի սեփականատեր Նարեկ Նալբանդյանին, ամիսներ առաջ բանվորներ է վարձել՝ տարածքում շինարարական աշխատանքներ իրականացնելու համար: Բայց արդեն երկրորդ ամիսն է՝ շինարարները կատարված աշխատանքի դիմաց ոչ մի լումա չեն ստացել: «Բանավոր պայմանավորվել ենք, գնացել ենք, խոսել ենք, գործն արել ենք. գումեր ենք կառուցել, գումերի կտուրներն ենք սարքել: Մեզ դեռ ո՛չ գրանցել են, ո՛չ էլ փող են տվել: Էսօր-էգուց են անում: Վաղը տարեք, մյուս օրը բերեք, ամեն անգամ մի ստից պատճառաբանությամբ մեր փողերը չեն տալիս: Հիմա էդ բոլոր թղթերը բերել ենք, վերջացրել ենք, ու նորից նույն պատմությունը: Ասենք, ասում են՝ բերեք կատարողականը, տանում ենք, ասում են՝ մի հատ էլ թուղթ բերեք, որ ինչ ա մնացել, որ պետք է արվի: Առավոտից իրիկուն թղթերի հետեւից ենք վազում, ու փող չկա»,- մեզ հետ զրույցում բողոքեց աշխատողներից մեկը: Մենք ամեն կերպ փորձեցինք կապ հաստատել ընկերության, Նարեկ Նալբանդյանի հետ, անգամ ֆեյսբուքյան պաշտոնական էջին գրեցինք, սակայն ոչ մի հեռախոսահամարի չպատասխանեցին: Տեղեկացանք, որ տնօրինությունը նոր խոստում է տվել՝ սպասել մինչեւ օրվա վերջ: Սակայն երեք օր անց էլ դեռ գումարը չեն փոխանցել, իսկ այն փոքր չէ՝ մոտ 40 մլն դրամ:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ

ԺՀՄԻԳ

ԽԱԽՏՈՒՄՆԵՐՆ ԱՅՆՔԱՆ ՇԱՏ ԵՆ ԵՂԵԼ, ՈՐ ԱՆԳԱՄ ԵՎՐԱԴԻՏՈՐԴՆԵՐԸ ՉԵՆ ԿԱՐՈՂԱՑԵԼ ԱՉՔ ՓԱԿԵԼ

Չնայած Նիկոլ Փաշինյանի եւ նրա իշխանության նկատմամբ Արեւմուտքի կողմնապահ վերաբերմունքին, ընտրությունների միջազգային դիտորդական առաքելության (ԵԽ, ԵԽԽՎ, ԵԱՀԿ ԽՎ) նախնական եզրակացության մեջ հունիսի 7-ի ընտրությունների վերաբերյալ մի շարք ուշագրավ արձանագրումներ են կատարվել: Խախտումներն այնքան շատ են եղել, որ անգամ նիկոլասեր եվրոպացիները չեն կարողացել բոլորի վրա աչք փակել:

Զեկույցը, բնականաբար, ամբողջական իրավիճակը չի արտացոլում եւ առավել կենտրոնացված է Ռուսաստանի՝ նախընտրական քարոզչությանը միջամտության վրա: Սակայն տեղ են գտել նաեւ իշխանությունների կողմից իրականացված չարաշահումների վերաբերյալ որոշ գնահատականներ: Մասնավորապես արձանագրվել է, որ նախընտրական քարոզարշավը եղել է ակտիվ եւ հիմնականում խաղաղ, սակայն խիստ բեւեռացված, սադրիչ հռետորաբանությամբ, այդ թվում՝ իշխող կուսակցության ցուցակը գլխավորող թեկնածուի կողմից: «Քարոզարշավն աչքի է ընկել բարձր առճակատմամբ եւ պառակտող հռետորաբանությամբ, ինչպես նաեւ՝ ձայների գնման եւ ընտրական այլ խախտումների վերաբերյալ մեղադրանքներով, որոնք հանգեցրել են ընդդիմության թեկնածուների եւ ակտիվիստների նկատմամբ բազմաթիվ քրեական վարույթների հարուցմանը, ինչի հետեւանքով ընդդիմության բազմաթիվ աջակիցներ ձեռնպահ են մնացել քարոզարշավին ակտիվ մասնակցելուց: Այս հանգամանքները, ինչպես նաեւ պետական հատվածի աշխատակիցների նկատմամբ՝ իշխող կուսակցության միջոցառումներին մասնակցելու նպատակով գործադրված ճնշումները եւ վերջերս ներդրված սոցիալական եւ տնտեսական միջոցառումները մտահոգություններ են առաջացրել քարոզչություն իրականացնելու հնարավորությունների հավասարության առնչությամբ»,- գրված է զեկույցում:

Արձանագրել են, որ 2026 թ. կատարված որոշ փոփոխություններ ներդրվել են արագացված կարգով, սահմանափակ քննարկումների արդյունքում, առանց քաղաքական ուժերի լայն աջակցության, ընդ որում դրանցից մի քանիսն ընդունվել են ընտրությունները նշանակվելուց հետո, ինչը հակասում է ԵԱՀԿ պարտավորություններին եւ միջազգային լավագույն փորձին: ԺՀՄԻԳ ԸՂԱ-ն դիտարկել եւ ստացել է բազմաթիվ հաղորդումներ, որոնցից մի քանիսը գնահատել է որպես արժանահավատ՝ իշխող կուսակցության նախընտրական միջոցառումներին մասնակցելու նպատակով ընտրողների նկատմամբ ճնշումների վերաբերյալ:

«Ընդհանուր քաղաքական միջավայրը բնութագրվում էր նաեւ կառավարության եւ Հայ առաքելական եկեղեցու ղեկավարության միջեւ առկա լարվածությամբ, ինչպես նաեւ՝ մի շարք նախկին պաշտոնատար անձանց, եկեղեցական առաջնորդների եւ հայտնի ընդդիմադիր գործիչների, այդ թվում՝ «Ուժեղ Հայաստան»-ի գործող ղեկավարի նկատմամբ հարուցված քրեական գործերով եւ ձերբակալություններով: Թեեւ իշխանությունները պնդում էին, որ այդ գործերը հիմնականում միտված են եղել կոռուպցիայի կանխարգելմանը կամ սահմանադրական կարգի պաշտպանությանը՝ իշխանությունը բռնի զավթելու փորձերից, այնուամենայնիվ, ընդդիմությունը եւ քաղաքացիական հասարակության որոշ կազմակերպություններ դրանք դատապարտել են որպես քաղաքական շարժառիթներով պայմանավորված՝ պնդելով, որ դրանք նպաստել են վախի մթնոլորտի ձեւավորմանը: Վերջին տարիներին մի շարք միջազգային եւ տեղական իրավապաշտպան կազմակերպություններ արձանագրել են խոսքի եւ հավաքների հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի նվազում, ինչպես նաեւ մտահոգություններ են հայտնել մինչդատական կալանքի չափազանց լայն կիրառման, ոստիկանության կողմից թույլ տրված չարաշահումների ոչ բավարար քննության եւ դատական իշխանության անկախության թուլացման վերաբերյալ»:

Եվրադիտորդների գնահատմամբ՝ Հանրային հեռուստաընկերությունը ցուցաբերել է ակնհայտ կողմնակալություն՝ հօգուտ իշխող կուսակցության, ինչը հակասում է նրա իրավական պարտավորություններին եւ հանրային առաքելությանը: ԵՄ եւ ԱՄՆ որոշ առաջնորդներ հրապարակավ աջակցություն են հայտնել վարչապետին, ինչը ՄԸԴԱ-ի հետ հանդիպած ընդդիմադիր կուսակցությունների մեծ մասը գնահատել է որպես արտաքին ուժերի ներգրավվածություն՝ հօգուտ իշխող կուսակցության:

Զեկույցում արձանագրել են, որ ՀՀ վարչապետը կիրառել է վիրավորական եւ հրահրող արտահայտություններ, այդ թվում՝ տեղահանված հայ փախստականների հասցեին: Վարչապետը նաեւ հրապարակայնորեն սպառնացել է ընդդիմադիր թեկնածուներին հետաքննություններով եւ նրանց պատկանող ընկերությունների ազգայնացմամբ: Ընտրություններից առաջ կառավարության կողմից ներդրվել են մի շարք սոցիալական եւ տնտեսական միջոցառումներ, ինչը հակասում է ԵԱՀԿ պարտավորություններին եւ միջազգային չափանիշներին, որոնք պահանջում են պետության եւ քաղաքական կուսակցությունների միջեւ հստակ տարանջատում, եւ կարող է խաթարել ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար հավասար հնարավորությունների սկզբունքը:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՆԱՅԵԼՈՎ ԻՐԵՆՑ ԱՉՔԵՐԻ ՄԵՋ՝ ԱՍԵԼ ԵՆՔ, ՈՐ ՊԱՏԵՐԱԶՄ ԲԵՐՈՂՆ ԻՐԵՆՔ ԵՆ

«Հրապարակի» զրուցակիցը ՀԱԿ ներկայացուցիչ **Արմեն Խաչատրյանն** է:

- Ընտրությունների արդյունքներն ընդդիմադիր ուժերը կասկածի տակ են դնում, չեն ընդունում: Երեկ վերահաշվարկներ էին ընթանում, ակնհայտ է դառնում, որ ինչոր մախինացիաների արդյունքում իշխանություններին հաջողվել է ընդդիմության քվեները չեզոքացնել: Որպես ընդդիմադիր ուժի ներկայացուցիչ՝ ի՞նչ քայլեր եք պատրաստվում ձեռնարկել, որո՞նք են լինելու ՀԱԿ-ի հետագա անելիքները:

- Մեր արդյունքներով մենք առաջատար ուժերից չենք, հետեւաբար՝ անելիքների առումով գործ ունեն այն ուժերը, ովքեր ստացել են մեծ քանակությամբ քվեներ: Այնուամենայնիվ, մենք միանում ենք այն պնդմանը, որ նախ նախընտրական քարոզարշավի ընթացքում ակնհայտ անհավասար մրցակցություն էր՝ վարչական, պետական ռեսուրսների համադրությամբ, իսկ քվեարկության նախորդ օրերին եւ քվեարկության օրը տարբեր ընդդիմադիր ուժերի ձերբակալություններն էական ազդեցություն թողեցին ընտրությունների արդյունքների վրա, եւ այս իմաստով ընտրությունների լեգիտիմությունն իսկապես մեծ հարցականի տակ է, եթե չասենք, որ ամբողջապես ընտրությունները կեղծվել են, եւ դրանք չեն համապատասխանում ազատ եւ արդար ընտրությունների չափանիշներին: Մենք միանում ենք ընդդիմության հայտարարությանն ու պահանջներին: ԲՀԿ-ն ու «Միասնության թեւեր»-ն այս պահին վերահաշվարկ են իրականացնում, մենք եւս ունենք տեղեկություններ, որ հաշվարկի ժամանակ ընդդիմության դեմ դիտավորյալ քայլեր են արվել: Ընդհուպ մեր թիմակիցներից մեկն ասաց, որ տեսել է, թե ինչպես են ԲՀԿ-ի քվեաթերթիկները մկրատով կտրատում հաշվարկի ժամանակ: Բազմաթիվ խախտումներ են եղել, որոնք այս ընտրությունները դարձնում են ոչ լեգիտիմ: Ամեն դեպքում, որոշում կայացնող հիմնական ուժերն այն ուժերն են, որոնք մտնում են խորհրդարան: Դրանից հետո նոր մենք կարող ենք մեր աջակցության ձեւի մասին խոսել: Վախի եւ ատելության մթնոլորտում քաղաքացին չի ունեցել ազատ ընտրելու հնարավորություն, ընդ որում՝ վախը ոչ միայն կոնկրետ գործողությունների արդյունքում սերմանվեց, այլեւ՝ պատերազմի սպառնալիքի արդյունքում, որ եթե ինձ չընտրեք, պատերազմ է սկսվելու: Այս մանիպուլյացիաների արդյունքում ընտրողները ոչ թե իրենց քվեն տվել են գաղափարների համար, այլ՝ վախից դրդված: Նման մթնոլորտում դժվար է գիտակցված ընտրություն կատարելը:

- 2021 թվականին ՀԱԿ-ը մի քանի անգամ ավելի շատ քվեներ էր ստացել, ի՞նչ փոխվեց այս 5 տարվա ընթացքում, որ ձեր ընտրողների թիվը նվազեց:

- Մենք այդ համեմատությանը կողմ չենք: Մենք բախվում ենք անընդհատ այս հարցին: Մեծամտություն չթվա, բայց պատճառն այն է, որ մենք մշտապես ճշմարտություն ենք ասում, իսկ դա հասարակությանը դուր չի գալիս: Մենք հանդես ենք գալիս կամ ծրագրային ելույթներով, կամ ճշմարտությունն ենք ասում, բայց գուցե ժողովրդին այլ բան է պետք, օրինակ՝ շոուներ, բեմականացումներ եւ այլն, սակայն մենք չենք կարողանում դա ապահովել, մենք գնում ենք ծրագրերի ետեւից, թեպետ ես համարում եմ, որ 2021-ին եւս քաղաքացիներն ընտրություն կատարեցին ատելության եւ պառակտման մթնոլորտում, այն ժամանակ էլ շատերն ընտրություն կատարեցին, որպեսզի նախկին իշխանությունները չվերադառնան: Մենք կփորձենք հասկանալ, թե ինչն էր այս ամենի պատճառը: Միայն այն հանգամանքը, որ երեք մեծ բանավեճերին մասնակցեցինք եւ բացահայտեցինք իշխանության ստերը, դա հերիք էր, որ մասնակցեինք ընտրություններին: Դեմդիմաց, նայելով իշխանականների աչքերի մեջ՝ մենք ասացինք, որ պատերազմ բերողն իրենք են եւ այդ իրենք են պատերազմը բերել: Սա շատ լավ առիթ է՝ նաեւ խոսելու այն մասին, որ փոշիացված ձայների արդյունքում չէ, որ Նիկոլ Փաշինյանը ստացավ ամենաշատ ձայները: Փոշիացված ձայներն աշխատում են, երբ խոսքը վերաբերում է 42-45 տոկոսին: Այժմ մտածելու բան կա. ինչպե՞ս ստացվեց, որ առանց փոշիացված ձայների Նիկոլ Փաշինյանը ստացավ 49 տոկոս ձայն:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՐՑՈՒՄ

Միակ անտրամաբանական բանն ինձ համար վերջնարդյունքն էր

«Հրապարակի» զրուցակիցն է սոցիոլոգ **Արթուր Պարոնյանը**:

- Մինչ ընտրությունները, բազմաթիվ սոցհարցումների տվյալներ են հրապարակվել, եւ նույնիսկ ՔՊ-ին ու Փաշինյանին աջակցելուն միտված սոցհարցումներում ՔՊ-ն ոչ մի անգամ չի ունեցել այն ցուցանիշը, որը գրանցեց ընտրությունների արդյունքում: Ի՞նչ ֆենոմենի հետ գործ ունենք:

- Եթե սոցիոլոգիան թվերի հետ չի համընկնում, կամ սոցիոլոգիայի թվերն են սխալ, կամ ընտրությունների թվերն են սխալ: Քանի որ բոլոր սոցիոլոգիական հարցումները ցույց են տվել մի պատկեր, իսկ ընտրություններում ունեցել ենք ուրիշ պատկեր, խնդիրը հետեւյալն է. ես՝ ուզեմ թե չուզեմ, պիտի ենթադրեմ, որ ես եմ սխալվել, ինչպես նաեւ՝ մնացած բոլորը, քանի որ ես չունեմ այն գործիքակազմը, որ ապացուցեմ, որ իրենց թիվն է սխալ: Ես պիտի ընդունեմ, որ իրենք ճիշտ են, ես եմ սխալ: Բայց նաեւ նշեմ, որ եղել են բազմաթիվ, բազմաթիվ այլ հարցումներ, որոնց արդյունքները երբեւիցե չեն հրապարակել: Բացի դրանից, այն ուժը, որը վերցնում է գրեթե 50 տոկոս, ինքը 700 հոգու ընտրությունների ժամանակ չի ձերբակալում, այդքան քվե ունեցող ուժը բռնությունների չի գնում: Ինչի՞ համար են իրենք գնում բռնության, եթե հաղթում են...

- Զինվորների՝ 20:00-ից հետո, մինչեւ ուշ գիշեր ընտրատեղամասերում ընտրությունների գնալու կադրերն էլ կան:

- Վիդեոներն էլ կան, ամեն ինչն էլ կա, իրենք փաստացի այնպես արեցին, որ բոլոր սոցիոլոգների, այդ թվում՝ նաեւ իմ կարծիքը, իմ խոսքի գինը շատ էժանացրին, քանի որ ես կրվեցի, բոլորը կրվեցին: Ես կրվել եմ, բայց, միեւնույն ժամանակ, այդքան հարցում ուներ ՔՊ-ն՝ թող տպեին: Մի հարցում եղա՞լ է, որ ՔՊ-ն 50 տոկոս ունենար, չէ՝ չի եղել: Հակառակ պարագայում տպած կլինեին, բայց վերջին հարցումները եւ մնացած բոլոր զարգացումները ցույց էին տալիս, որ իրենք հաղթող ուժ չեն: Հաղթող ուժը չի ասում՝ եթե ինձ չեք քվեարկելու, գնացեք բոլորին դեմ քվեարկեք: Սեփական թվերի հիման վրա, մինչեւ IRI-ի հարցումը, ես ասել եմ, որ իրենք կարող են ունենալ ամենաշատը 42 տոկոս, ամենայն հավանականությամբ՝ 40: Մինչեւ 40 տոկոս կարող եմ հասկանալ, բայց 49 տոկոս ոչ մի ձեւով չեմ կարողանում հասկանալ:

- Որքանո՞վ է տրամաբանական, որ հանրության շատ ավելի մեծ զանգված դժգոհ է Փաշինյանից, սակայն նա ստացել է 46 հազար ավել ձայն, քան 2021 թվականին: Այդ դժգոհություններն այսօր այնքան ակնհայտ են:

- Ակնհայտ է բոլորի համար, որ 2021 թվականից մինչեւ 2026 թվականը հսկայական քանակությամբ մարդ կորցրել է վստահությունը այդ գործչի նկատմամբ եւ այդ ուժի; Այսինքն, իրենք ունեին կորուստ, որը տարբեր հաշվարկներով կազմում էր 15-20 տոկոս: Նույնն էլ ցույց էին տալիս բոլոր հարցումները, այդ թվում IRI բազմաթիվ հարցումներ, իրենց հարցումները: Դա փողոցի տրամադրությունն էր, փողոցում կար ակնհայտ հակաքպ տրամադրություն: Այդ տրամադրություններն իրենք ոնց մեկ գիշերում կոտրեցին՝ ես չեմ կարող բացատրել, բայց մենք ունենք փաստ, որ իրենց մոտ գրված է՝ 49,83 տոկոս: Դա փաստ է, ու ես հուսով եմ, որ ընդդիմությունն ինչ-որ ձեւով կկարողանա այդ փաստը հերքել: Հակառակ դեպքում դա վերլուծության ենթակա չէ:

- Իսկ հանրությունը հե՞շտ կհաշտվի այդ թվի հետ, թե՞ ամեն ինչ կախված է ընդդիմության քայլերից:

- Ոչ միայն ես, այլեւ շատ-շատ մարդիկ շոկի մեջ են, քանի որ սա այն աստիճան անսպասելի թիվ է, որ դու ուղղակի ապշում ես այս թվից: Պետք է անենք երկու գործողություն.

Ա. հասկանանք, թե ոնց են իրենք այս թիվը ստացել, դրանից հետո վերլուծել այլ բաներ, որոնք բխում են դրանից: Այսինքն, ես այս պահին, որպես քաղաքացի, շոկի մեջ եմ:

Բ. ես սպասում եմ ընդդիմությանը, իրենց քայլերին ու հայտարարություններին:

Արդյոք պատրա՞ստ եմ ես ինչ-որ գործողություններ ու քայլեր անել՝ հնարավոր է, ինչ-որ մարդ կա, որը պատրաստ է, մարդ կա, որը կսպասի մնացածներին, բայց ես չեմ կարող գնալ հիմա, կանգնել ԿԸՀ-ի առաջ, ձեռքս պաստառ վերցնել, թե ես ձեզ չեմ հավատում: Ես չունեմ բացատրություն այս ամեն ինչին: Սա ինձ համար շոկ է, ամբողջ նախընտրական տրամաբանությունը բռնելով, ջարդելով եւ մնացած ամեն ինչով ցույց էր տալիս, որ այն բոլոր հարցումները, որոնք տպվել են, այն հարցումները, որոնք որ ես եմ արել, այն հարցումները, որ արել են իմ կոլեգաները, այդ բոլոր հարցումները ցույց էին տալիս թվեր, որոնք շատ տրամաբանական էին: Միակ անտրամաբանական բանն ինձ համար վերջնարդյունքն էր, բացատրություն չունեմ: Եթե ընդդիմությունը կարողանա բացատրել դա խախտումներով, ես շատ ուրախ կլինեմ, կստացվի, որ մենք ճիշտ էինք, իսկ եթե՝ չէ, նշանակում է, որ այս հասարակությանը պետք է ավելի խոր վերլուծել: Բայց ես չեմ հավատում, որ ես սխալվել եմ:

Հայկա ԱԼՈՅԱՆ

Անգամ Ռուանդայում՝ գենոցիդի ժամանակ այսպիսի ընտրություններ չեն անցկացվել

Քննչական կոմիտեն հայտնել է, որ հունիսի 7-ին կատարված ընտրական հանցագործությունների վերաբերյալ նախաձեռնվել է 59 քրեական վարույթ, որից 43-ը՝ մարզային, 16-ը՝ Երեւանի քննչական ստորաբաժանումներում: Թե որ դեպքերն են դրանք, եւ արդյո՞ք դիտորդական առաքելությունների արձանագրած խախտումները վարույթների հիմք են դարձել, հայտնի չէ: ՔԿ-ն ընդամենը հոդվածների անուններն է տալիս. ՀՀ քրեական օրենսգրքի 210-րդ հոդված՝ ընտրական իրավունքի իրականացումը - 9 վարույթ: 214-րդ հոդված՝ մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը - 30 քրեական վարույթ, 215-րդ հոդված՝ քվեարկության գաղտնիությունը խախտելը - 17 վարույթ, 314-րդ հոդված՝ ահաբեկչության մասին սուտ տեղեկություններ տարածելը - 3 վարույթ: «Հրապարակի» հարցերին պատասխանում է «Հայաքվե» դիտորդական առաքելության անդամ **Արամ Պետրոսյանը**:

- Ձեզ հայտնի՞ է, թե ձեր արձանագրած խախտումներով քանի վարույթ կա նախաձեռնված:

- Ես մինչեւ լույս Շիրակի մարզում եմ եղել, չեմ կարող ասել, նոր եմ եկել գրասենյակ: Դեռ չեմ տիրապետում: Առավոտյան 5-ին եմ եկել, դե գիտեք՝ այնտեղ էլ էին ձերբակալություններ ընտրությունների ժամանակ: Տեսա՞ք, որ ԲՀԿ-ի ձայներն ընդամենը ընտրատեղամասում վերահաշվարկի արդյունքում ավելացան 120-ով: Այ, նման բաների վրա ուշադրություն դարձրեք: Սա, կարծում եմ, իրենք արհեստական են իջեցրել, որպեսզի այդ ուժը չանցնի, որովհետեւ նրա անցնելով ՔՊ-ն 3/5-ն է կորցնում, որն իրեն թույլ չի տալիս որոշ առանցքային պաշտոնների նշանակումներ անել՝ դատախազ, ԲԴԽ դատավոր, ՍԴ դատավոր: Այսպիսի պայմաններում, կարծում եմ, աշխարհի ոչ մի երկրում, անգամ Ռուանդայում՝ գենոցիդի ժամանակ այսպիսի ընտրություններ չեն անցկացվել:

- Իսկ թե, օրինակ, ձեր նկատած ակնառու դեպքերով կա՞ն վարույթներ:

- Ես կանգնած եմ եղել անձամբ, երբ որ Գյումրիում ռազմական ոստիկանությունը, ընտրատեղամասի դեմը շարված, սպաները բերում, զինվորներ էին մտցնում ներս: Ինձ հետաքրքիր է՝ ինչո՞ւ է սպան զինվորին ուղեկցում զորամասից մի քանի հարյուր մետրի վրա: Օրը ցերեկով ռազմական ոստիկանությունը կանգնած է, 200 մետր երեխեքին քայլացնում է սպան, ռազմականն էլ գլխներին կանգնում է: Ինձ կասե՞ք՝ դա ճնշո՞ւմ է, թե՞ ոչ: Էդ երեխան կարող է դուրս գալ զորամասից, հինգ կիլոմետր վազել սպաների հետ, բայց էդ ժամանակ իրենց չեն գալիս, չէ՞, ՌՈ-ից ուղեկցեն: Ինչո՞ւ ես եկել կանգնել ընտրատեղամասի մոտ, ռազմական ոստիկանություն ջան: Հանցագործությո՞ւն են անում երեխեքը, թե՞ սահմանադրության իրավունք են իրացնում:

- Քննչական կոմիտեի, դատախազության հաղորդագրությունները կարդալով, դուք ձեր արձանագրած խախտումները ճանաչո՞ւմ եք:

- Մենք փաստերը դնում ենք: Օրինակ, Գեղարքունիքի մարզում իրենց վստահված անձը վրա է տալիս «Ուժեղ Հայաստանի» ներկայացուցչի վրա, բայց նա մինչ այս պահը ձերբակալված չէ: Բայց ես ու դու հիմա խոսում ենք, մեզ գաղտնալսում են ու իքս մարդու վրա քրեական գործ են հարուցում: Կամ՝ դուք տեսել եք Հ1-ի հրապարակած ձայնագրությունները, ամբողջ օրը գաղտնալսում են հեռարձակում, սա ազդեցություն չէ՞ ընտրությունների վրա: Երբ որ ցերեկը զգում եք, որ ՔՊ-ն կկրվի, երեկոյան Դանիել Իոաննիսյանին կանչում եք եթեր, ասում է՝ եթե գոնե մի դեպք ապացուցվի, դա ազդեցություն կունենա: Հիմա սա ունեցա՞վ, թե՞ չէ: Բա ո՞նց է, որ միայն մեկ արձանագրության մեջ 70 ձայն ԲՀԿ-ից գողացել են, ու ոչ մեկին ոչ մի բան: 3-4 տեղ զինվորներին սաղ գիշեր քվեարկել տվեցիք, դա ազդեցություն չէ՞, իսկ ինչ-որ մի մարդու խոսակցությունը մյուս մարդու հետ, որը երրորդ մարդու մասին է, դա համարում եք կաշառք ու ազդեցություն եւ ընտրության ամբողջ օրը դա եք պտտում՝ «կաշառք, կաշառք»: Սա գաղտնալսման երկի՞ր է: Ի՞նչ եք ուզում մարդկանցից: Ադրբեջանցիները գալիս, Ամասիայում վիդեո են անում, գնում են, ԱԱԾ-ն դա չի տեսնում, բայց հարյուրավոր մարդկանց ձայնագրում է, ո՞վ է թույլ տվել: Կա՞ն դատարանի սանկցիաներ: Ես իմ ամբողջ կյանքում էս կարգի խայտառակ ընտրություն չեմ տեսել: Մի ուժից 700 հոգի ձերբակալում եք տարբեր պատճառներով, կալանավորում եք: Հերիք եղավ: Ո՞վ է տեսել, որ երկրի ղեկավարը ձայների 10 տոկոսի ամփոփման դեպքում հայտարարի, որ ինքն է ընտրվել: Սա ճնշում է ԿԸՀ-ի վրա: Հիմա նա կարո՞ղ է հակառակ արդյունքը հայտարարել՝ իհարկե, ոչ: Դա սահմանադրական կարգի տապալում էր: Նա Տիգրան Արզաքանցյանը չէ, նա երկրի վարչապետն է, որն ուղիղ ազդեցություն է գործել ԿԸՀ-ի վրա, ու դրա համար ԿԸՀ-ն չգիտի, թե ինչ պարզաբանում տա:

- Ձեր արձանագրումներն ամփոփե՞լ եք արդեն:

- Դեռ ոչ, կամփոփենք, հայտարարությամբ հանդես կգանք:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ԵՍՍՏԿ

ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԴՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ

Վարտվեցին հերթական խորհրդարանական ընտրությունները: Դեռ կլինեն բողոքներ, վերահաշվարկներ, վերջնական արդյունքներ, որից հետո կարելի կլինի ընտրությունները համարել ավարտված: Հնարավոր է Սահմանադրական դատարանում ընտրությունների արդյունքները վիճարկվեն՝ նախընտրական քարոզարշավին ՔՊ-ի գործած վայրագությունների, վարչական ռեսուրսի չարաշահումների, հանրային-պետական լրատվամիջոցների անթաքույց պրոքպական քարոզչության, զրպարտություններ ու կեղծիք տարածելու հիմքով:

Ի վերջո հատկանշական է, որ հունիսի 8-ին եվրոպացի դիտորդների ասուլիսում, որին մասնակցում էին OSCE/ODIHR-ը (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ), ԵԱՀԿ ԽՎ-ն, ԵԽԽՎ-ն եւ Եվրախորհրդարանը ներկայացնող դիտորդական առաքելությունների ղեկավարները, լրագրողների տված շատ ուղիղ հարցին՝ իրենք կարո՞ղ են Հայաստանում կայացած հունիսի 7-ի խորհրդարանական ընտրությունները գնահատել ազատ եւ արդար (free and fair), ասուլիսի բանախոսներից որեւէ մեկն ընտրություններին նման գնահատական չտվեց: Դիտորդները նշեցին եւ գնահատում էին այն, որ քաղաքական ընտրության լայն հնարավորություն է եղել հայաստանցի ընտրողի համար, ԿԸՀ-ն, մյուս ընտրական հանձնաժողովներն արհեստավարժորեն եւ բանիմացությամբ են ամբողջ գործընթացը կազմակերպել եւ վարել, քաղաքացիները պատրաստակամորեն եւ ակտիվությամբ մասնակցել են ընտրությանը եւ այլն, բայց արձանագրված ընտրական միջավայրի բեւեռացումը, դիմակայությունները, սեւ քարոզչությունը, վարչական եւ ֆինանսական ռեսուրսի չարաշահումները, մարդկանց հետապնդումները, ձերբակալությունները թույլ չտվեցին որեւէ մեկին հունիսի 7-ի ԱԺ ընտրությունն արդար կամ ազատ կոչել: Սա՝ ամենքին ի գիտություն:

Սակայն արդար, թե անարդար, ազատ, թե անազատ, այս ընտրությունից մի էական եզրակացություն կարելի է կատարել: Դա իրողությունն է, որ պրոարեւմտյան քաղաքական ուղեգիծը Հայաստանում հաղթեց պրոռուսական ուղեգծին: Փաշինյանն անձնապես որքան էլ անտանելի արարած լինի՝ հոգեպես անհավասարակշիռ, վայրենի, բարոյազուրկ, ստախոս, չգիտես էլ ինչ (հազիվ թե հայերենում կա բացասական ածական, որը նրան վերագրելի չլինի), միեւնույն է՝ այն քաղաքական ուղեգիծը, որ նա առաջ է տանում՝ Եվրոպայի եւ Արեւմուտքի հետ ինտեգրման, ճիշտ եւ Հայաստանի քաղաքացիների բացարձակ մեծամասնության աջակցությունը վայելող ուղեգիծ է: Չի բացառվում, որ երկրում գոյություն ունի մի ստորին, լյումպեն խավ, որը կարող է Փաշինյանին որպես անձ ընդունել, համակրել, ձայն տալ: Մարդկային պատմության ամենանողկալի արարածներն էլ ունեցել են համակիրներ եւ հետեւորդներ: Փաշինյանի պարագայում այդ օրինաչափությունն ինչո՞ւ պետք է չաշխատի: Սակայն քվեների մեծամասնությունը, որ հունիսի 7-ին նրան տրվել են, վստահաբար՝ Արեւմուտքի հետ մերձեցմանը, ինտեգրմանը տրված ձայներ են:

Ի դեպ, ինքս չեմ հավատում, թե Փաշինյանը 49% ձայն է ստացել, որովհետեւ եթե ԲՀԿ-ի՝ արձանագրված 77 ձայնի փոխարեն քվեարկության արդյունքների աղյուսակում ԸԸՀ-ն կարող է մուտքագրել 1 ձայն, նույն հաջողությամբ էլ ՔՊ-ի 70 ձայնի փոխարեն կարող են մուտքագրել 770 ձայն: Այնպես որ, դեռ պետք է սպասել եւ տեսնել, թե այն կուսակցական շտաբները, որոնք ունեն ՏԸՀ արձանագրությունների պատճենները, թվային ինչ տարբերություններ են արձանագրում բնօրինակ թղթային եւ ԿԸՀ աղյուսակի էլեկտրոնային տվյալների միջեւ, եւ վերջում ՔՊ-ի որքան ձայն է ամրագրվում: Սակայն 49%, թե 40, դրանք, ամեն պարագայում, որեւէ ուժի տրված ամենաշատ ձայներն են:

Եվ զվարճալին այն է, որ Փաշինյանը ստացել է այդ պրոարեւմտյան ձայները ոչ թե իր արեւմտյան մտահորիզոնի համար, այլ միջազգային իրադրությունը եւ Հայաստանի պրոռուսական շրջանակների անիմաստ քարոզչությունն են հանրային գիտակցության մեջ նրան որպես պրոարեւմտյան ֆիգուր հաստատել: Երբ հիմնավոր, թե հիմնազուրկ ամեն առիթով աղմկում են, թե Փաշինյանին Արեւմուտքը պաշտպանեց կամ հովանավորեց, կարծում են՝ դրանով Փաշինյանին վնաս են հասցնում: Ո՛չ, միայն օգնում են: Եվ ընտրություններում դրա արդյունքը տեսանք: Կամ՝ երբ ասում են, թե եվրահինտեգրումը նշանակում է Թուրքիայի հետ ինտեգրում՝ մոռանալով, որ Թուրքիայի հետ «Եղբայրության եւ բարեկամության պայմանագիր», ի հաշիվ Սեւրի դաշնագրի ու հայկական հողերի, ունի Ռուսաստանը, ոչ թե Եվրոպան, կարծում են՝ դրանով Հայաստանի ժողովրդին պետք է եվրահինտեգրումից շեղե՞ն: Նորից՝ իրենց թյուր պատկերացումների պատասխանն ընտրություններում ստացան:

Հայաստանին դեպի Ռուսաստան տանել ջանացող, Ռուսաստանի հետ ինտեգրումից խոսող «Հայաստան» դաշինքն ու ԲՀԿ-ն միասին 15% ձայն հազիվ հավաքեցին, նույնիսկ Փաշինյանի նման մերժելի ֆիգուրի առկայությամբ: Այդ արդյունքը պրոռուսական քաղաքական ուղեգծի եւ ուռճացված քարոզի վերջնական տապալումն էր Հայաստանում: Որքան արագ պրոռուսական շրջանակները Ռուսաստանը գերտերություն ու հյուսիսից ծագած արեւ տեսնող իրենց մտակաղապարներից ազատվեն, կարողանան իրական աշխարհն ընկալել, այնքան իրենց համար լավ: Չեն գիտակցի, չեն փոխվի՝ ժամանակի մեջ կվերանան, ինչպես խորհրդային կոմունիստները վերացան:

Հունիսի 7-ի ընտրությունները վերջնականապես արձանագրեցին, որ Հայաստանում պրոարեւմտյան քաղաքական ուղեգիծը չի կարող վիճարկվել պրոռուսական այլընտրանքով: Փաշինյանին հաղթել կարող է նույն՝ պրոարեւմտյան դաշտում նրա հետ մրցակցող ուժ եւ ֆիգուր: Գուցե իր հավասարակշռությամբ եւ չեզոքությամբ Փաշինյանին հավասարակշռող ուժ, բայց ո՛չ պրոռուսական: Նման ուժի վերածվելու պոտենցիալ այս պահին ունի միայն Սամվել Կարապետյանը: 25% ընտրազանգվածն ընդամենը մեկ-երկու ամսում ձեռք բերված հրաշալի ցուցանիշ է, այն էլ՝ հանպատրաստից ու հանգամանքների բերումով ՀՀ քաղաքական դաշտ մուտք գործելու պարագայում:

Հենց Կարապետյանի ներկայությունն ու ակնկալվող ներգրավվածությունը ՀՀ քաղաքական դաշտում թույլ են տալիս հուսալ, որ նա ժամանակի մեջ ավելի լավ կճանաչի իրողությունները եւ ավելի շատ ժամանակ կունենա հասարակությանը ճանաչելի դառնալու: Իսկ առաջիկա մեկ տարում, գուցե նույնիսկ կես տարում նոր սահմանադրության հանրաքվեն կամ ԵԱՏՄ/ԵՄ հանրաքվեն (որ հաստատ Հայաստանին կպարտադրվի կա՛մ ԵԱՏՄ-ի կողմից, կա՛մ ԵՄ-ի) մոտակա իրադարձություններ են, որոնց Կարապետյանի ուժն այսօրվանից կարող է պատրաստվել եւ հաջորդ ռաունդում Փաշինյանին տապալել: Էականը՝ կա անձ, եւ առջեւում կան առիթներ, մնացյալը ժամանակի եւ ներգրավվածության հարց է:

Հունիսի 7-ի ընտրությունները հաստատեցին Հայաստանի պրոարեւմտյան ուղեգիծը եւ ինտեգրումը, հանրաքվեն կարող է հաստատել քաղաքական դաշտի նոր կենտրոնը եւ առաջնորդին:

Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ
lusine@hraparak.am

ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԽՈՀԵՐ

Հայաստանի անկախանալուց հետո՝ անցած 35 տարում հանրապետությունում համապետական ընտրություններով իշխանություն չի փոխվել: Գուցե ճիշտ կլինի առաջիկա 20-30 տարում մեր երկրում համապետական ընտրություններ չանցկացնել, որովհետեւ այդ ընտրություններից հետո համագյուղացիները, բարեկամները, ընկերները, հարեւանները, նույնիսկ՝ նույն ընտանիքի անդամներն իրար հետ թշնամանում են: Մանավանդ որ բնակչության մեծ մասը քաղաքագիտությունից բավարար գիտելիքներ, տրամաբանություն, բարոյական սկզբունքներ չունի՝ քաղաքական ճիշտ ընտրություն կատարելու համար: Հայաստանի բոլոր իշխանություններն ընտրություններում անխնա օգտագործել են պետական եւ վարչական ռեսուրսները, սակայն ՔՊ-ական իշխանությունն այս գործում ավելի է կատարելագործվել:

Սկսած 2023 թվականից, երբ հայտնի էր, որ սահմանազատման անվան տակ, միակողմանի, ապօրինի կերպով Ադրբեջանին են հանձնվելու Տավուշի սահմանային տարածքները, մարզի սահմանամերձ գյուղերում պետական աջակցությամբ, վարկային միջոցներով 16 միլիոն, հետագայում 21 միլիոն դրամ արժեքով առանձնատների շինարարություն սկսվեց: Դա արվեց, որպեսզի սահմանազատումով Ադրբեջանին տարածքների հանձնումը սահմանամերձ բնակիչների դժգոհությունը չհարուցի: Հետո այդ ծրագիրը տարածվեց նաեւ մարզի այլ սահմանամերձ գյուղերում, որպեսզի այդ գյուղերի բնակիչները, տեսնելով իշխանության կողմից իրենց արված «լավությունը», ԱԺ ընտրություններում քվեարկեն ՔՊ կուսակցության օգտին:

Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Ոսկեպար, Բաղանիս եւ այլ գյուղերում հունիսի 7-ի քվեարկության արդյունքները մեծապես իշխող կուսակցության օգտին էին: Սահմանամերձ գյուղերի բնակիչներին առանձնապես չի մտահոգել, որ Նիկոլ Փաշինյանի կողմից անոնս արված հայ-ադրբեջանական սահմանազատման գործընթացի շարունակության դեպքում նախկինում անկլավներ համարվող Վերին Ոսկեպար, Բարխուդարլու, Սոֆուլու գյուղերի տարածքների հանձնման դեպքում Ոսկեպար գյուղը հայտնվելու է ադրբեջանական շրջափակման մեջ, Կիրանց-Ոսկեպար ավտոճանապարհը հանձնվելու է Ադրբեջանին, խախտվելու է Նոյեմբերյան համայնքի բնակավայրերի տրանսպորտային կապն Իջեւանի հետ: Դրա հետեւանքով խաթարվելու է նաեւ Ազատամուտ գյուղի տարածքով Իջեւանի կապը Բերդ համայնքի հետ, Այգեհովիտ գյուղի Կայան բնակավայրից Ադրբեջանին տարածքներ են հանձնվելու, Այգեհովիտ, Վազաշեն գյուղերը հայտնվելու են յուրատեսակ շրջափակման մեջ:

Մեր գյուղերում, փաստորեն, ինքնապաշտպանության բնազդն էլ են կորցրել. Վազաշենի, Այգեհովիտի, Ազատամուտի բնակիչները հունիսի 7-ին ամենաշատ քվեները տվել են ՔՊ կուսակցությանը: Տավուշում նախկին ՀՀԿ-ական գյուղապետերը 2018 թվականի իշխանափոխությունից հետո սահուն կերպով անդամագրվեցին «Մերժիր Սերժին» կարգախոսով իշխանության եկած ՔՊ կուսակցությանը: Այժմ վարչական ղեկավարներ կոչվող նախկին գյուղապետերն իրենց պաշտոնական լիազորությունները, ընկերական, հարեւանական, բարեկամական կապերն օգտագործել են հունիսի 7-ին կայացած ընտրություններում իշխող կուսակցության համար քվեներ բերելու համար: Հունիսի 7-ից առաջ իշխանության կողմից բազում խոստումներ են տրվել՝ ընտրողների խնդիրները լուծելու ուղղությամբ: Բնակիչներից ոմանք իրենց մտերիմներին խոստովանել են՝ խոստացել են հունիսի 7-ի ընտրություններից հետո իրենց պետական հիմնարկներում աշխատանքի տեղավորել: Հայաստանում ընտրությունների հետ կապված նախկին վատ ավանդույթներն այժմ դարձել են վատթարագույն ավանդույթներ:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Սկիզբը՝ «Հրապարակ»-ի հունիսի 5-ի համարում

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆԸ ԻՆՉ ԿԵՂԾԻՔՆԵՐ ԵՆ ՆԱԽՈՐԴԵԼ

Կարեւոր հիմնավորումներից մեկը, որ Նիկոլի իշխանությունը հունիսի 7-ից առաջ միտված էր կեղծել ընտրությունների արդյունքները (ինչը, արձանագրենք, արդեն կատարված փաստ է), ԿԸՀ նախագահի պաշտոնում Նիկոլի ընկերոջ՝ Վահագն Հովակիմյանի ընտրությունն էր՝ սահմանադրական օրենքի բացահայտ ու կոպիտ խախտմամբ: Այսինքն՝ 2022 թվականին նրա ապօրինի ընտրությունը 2026թ. հունիսի 7-ի արդյունքների կեղծմանը նախապատրաստվելու, դրա հուսալիությունն ապահովելու նպատակն է ունեցել:

Այս կարծիքի հիմքը ոչ միայն վերոնշյալ ապօրինի ընտրության բուն փաստն է, այլեւ չնայած նրա ընտրվելու հետ կապված խախտման մասին մամուլի հրապարակմանը եւ նույնիսկ ՁԼՄ-ի միջոցով հանցագործության մասին ներկայացված հաղորդմանը, Հայաստանի վարչապետի պաշտոնը զբաղեցնողի, գլխավոր դատախազի եւ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե կոչվածի այն ժամանակվա նախագահ Սասուն Խաչատրյանի կողմից այդ փաստի առթիվ համապատասխան միջոցներ չձեռնարկելը:

Կուսակցության ու դրա վարչության անդամն էր, նա ընտրությունից օրեր առաջ մանդատից հրաժարվելու եւ կուսակցությունից դուրս գալու դիմումներ էր գրել: Եվ տեսնելով, որ ընտրվելու համար անհրաժեշտ քվեները նվազագույն շեմը հաղթահարելու համար անբավարար են, Հովակիմյանը բացահայտ ու կոպտագույն օրինախախտմամբ մասնակցել է ԿԸՀ նախագահի պաշտոնում սեփական անձի ընտրությանը՝ վստահ լինելով, որ Նիկոլը եւ իրավապահ մարմիններն աչք են փակելու կատարվածի վրա: Քվեարկությանը Հովակիմյանի մասնակցությունը հարցեր է առաջացրել նույնիսկ ՔՊ կուսակցության ու նույնանուն խմբակցության նրա գործընկերների մոտ, սակայն օրվա «հերոսը» պնդել է, որ իր մասնակցության մասով արգելք չկա: Լրագրողի հարցին, թե ինչու հանդես չի եկել շահերի բախման ու քվեարկությունից հրաժարվելու վերաբերյալ հայտարարությամբ եւ անձամբ քվեարկել է իր իսկ ընտրությանը, Հովակիմյանը, երեւի շփոթմունքից, հայերենը բռնաբարելով, բառացիորեն ասել է. «ԱԺ կանոնակարգը շահերի բախում տեսնում ա, երբ որ օրենքների քննարկում է, որը որ դրանից կարող ա անձը՝ ինքը, շահեկան լինի» (տես՝ «Արմքոմեդի» 1043, 13:00 րոպեից): Այստեղ են ասել՝ բաբոյիդ արա՛ւ…

Վահագն Հովակիմյանը, այսպիսով ի ցույց դնելով թե՛ պատգամավորի, թե՛ ԿԸՀ նախագահի պաշտոններին անհարիր իրավական անգրագիտությունը կամ, ավելի հավանական է, ցինիկաբար ստելով, պատասխանել է, որ շահերի բախումը վերաբերում է միայն օրենքների քվեարկությանը (այսինքն՝ որոշումների վերաբերյալ քվեարկությանը չի վերաբերում), ինչն ակնհայտ սխալ ու Հայաստանի օրենսդրությանը հակասող պատասխան է: Նախ, «ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի ու դրա 2-րդ կետի համաձայն, պատգամավորը կարող է մեկ անգամ անմիջապես քվեարկությունից առաջ «հանդես գալ շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ»:

«ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի ու դրա 5-րդ կետի համաձայն, «Պատգամավորի կողմից իր կամ իրեն փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվելը նշանակում է օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալը, ԱԺ որոշման, հայտարարության կամ ուղերձի նախագիծ ներկայացնելը, Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված հարցի վերաբերյալ առաջարկ ներկայացնելը, ինչպես նաեւ՝ ԱԺ կամ նրա հանձնաժողովի նիստում ելույթ ունենալը, հարցեր տալը կամ քվեարկությանը մասնակցելը, որը թեեւ ինքնին օրինական է, սակայն պատգամավորը տեղյակ է կամ պարտավոր էր տեղյակ լինել, որ այն հանգեցնում կամ նպաստում է կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել նաեւ՝

5) պաշտոնում իր ընտրությանը կամ նշանակմանը, բացառությամբ սույն օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասում նշված պաշտոնների, ինչպես նաեւ՝ որպես Ազգային ժողովի կողմից ընտրվող պաշտոնում թեկնածու՝ իր ելույթի»:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 4-րդ հոդվածի համաձայն, հանրային (պետական) պաշտոն է նաեւ պատգամավորի պաշտոնը: Նույն օրենքի 33-րդ հոդվածի («Շահերի բախումը») 5-րդ մասի իմպերատիվ պահանջի համաձայն, «Պաշտոն զբաղեցնող անձը պետք է խուսափի շահերի բախման հանգեցնող գործողություններից, ձեռնպահ մնա շահերի բախման իրավիճակում գործողություն կատարելուց կամ որոշում ընդունելուց»:

Հաջորդ խախտումը. 2020թ. պատգամավոր Սուրեն Գեւորգյանը Ազգային ժողով կոչվածում միջնորդում էր դադարեցնել Հրայր Թովմասյանի լիազորությունները ՍԴ-ում, քանի որ վերջինս, մինչ ՍԴ նախագահի պաշտոնում պաշտոնավարելը, եղել էր ՀՀԿ-ի պատասխանատու անդամ, այսինքն՝ քաղաքականացված սուբյեկտ: Այս դեպքում եւս Վահագն Հովակիմյանը քաղաքականացված սուբյեկտ էր (ընտրություններից առաջ ՔՊԿ վարչության անդամ), հետեւաբար ստացվում է, որ ԿԸՀ նախագահի պաշտոնին առաջ է քաշվել բացահայտ ապօրինի ընթացակարգով:

Վերոնշյալ պաշտոնում Վահագն Հովակիմյանի կողմից ընտրվելը միայն էթիկայի խախտում, օրենքների անտեսում եւ անձնական շահերով առաջնորդվել չէ, այլ նաեւ՝ սահմանադրական կարգի տապալում (Քրեական օրենսգրքի 420-րդ հոդված): Համաձայն նշված հոդվածի, «Սահմանադրական կարգը տապալելը՝ Սահմանադրության 1-ին, 2-րդ, 3-րդ կամ 4-րդ հոդվածով կամ 5-րդ կամ 6-րդ հոդվածի 1-ին մասով կամ 7-րդ հոդվածով նախատեսված նորմի գործողությունը փաստացի դադարեցնելը՝պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով»:

Տվյալ դեպքում փաստացի դադարեցվել է Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված օրինականության սկզբունքը. «Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»: Հովակիմյանը՝ որպես պետական մարմնի պաշտոնյա, ԿԸՀ նախագահի պաշտոնում իր ընտրությանը մասնակցելու լիազորությամբ օժտված չի եղել: Նրա արարքն առերեւույթ համապատասխանում է նաեւ Քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի հատկանիշներին (Պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը):

Հուսանք, որ ընդդիմությունն ընտրությունների արդյունքները վիճարկելիս կօգտագործի վերոնշյալ փաստերը, նաեւ համապատասխան դիմումներով կդիմի ինչպես ՍԴ, այնպես էլ գլխավոր դատախազին:

Արթուր ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2022 թ. հոկտեմբերի 7-ին Ազգային ժողով կոչվածում տեղի է ունեցել ԱԺ պատմության ընթացքում ոչ միայն իր խայտառակ բնույթով, այլեւ բացահայտ ու կոպտագույն օրինախախտմամբ աննախադեպ, ինչպես նաեւ ԿԸՀ նախագահի ընտրության ողջ պատմության ընթացքում դարձյալ իր խայտառակ եւ ապօրինի բնույթով աննախադեպ ընտրություն. Ազգային ժողով կոչվածն իշխող ՔՊ խմբակցության առաջադրմամբ ու միայն իշխանական պատգամավորների ընդամենը 65 կողմ ձայնով, դրսեւորելով հովանավորչություն (կոռուպցիայի արտահայտություններից մեկը), քաղաքական ու համակարգային կոռուպցիա, ԿԸՀ նախագահ է ընտրել ՔՊ պատգամավոր, խորհրդարանի իշխող խմբակցության անդամ Վահագն Հովակիմյանին:

Հովակիմյանը դրանից դեռ մի քանի օր առաջ «Քաղպայմանագիր» խումբ տեսնում ա, երբ որ օրենքների քննարկում է, որը որ դրանից կարող ա անձը՝ ինքը, շահեկան լինի» (տես՝ «Արմքոմեդի» 1043, 13:00 րոպեից): Այստեղ են ասել՝ բաբոյիդ արա՛ւ…

Վահագն Հովակիմյանը, այսպիսով ի ցույց դնելով թե՛ պատգամավորի, թե՛ ԿԸՀ նախագահի պաշտոններին անհարիր իրավական անգրագիտությունը կամ, ավելի հավանական է, ցինիկաբար ստելով, պատասխանել է, որ շահերի բախումը վերաբերում է միայն օրենքների քվեարկությանը (այսինքն՝ որոշումների վերաբերյալ քվեարկությանը չի վերաբերում), ինչն ակնհայտ սխալ ու Հայաստանի օրենսդրությանը հակասող պատասխան է: Նախ, «ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի ու դրա 2-րդ կետի համաձայն, պատգամավորը կարող է մեկ անգամ անմիջապես քվեարկությունից առաջ

7 ՏԱՐՈՒՄ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ 16 ՀԱԶԱՐՈՎ ԱՎԵԼԱՑԵԼ Է



Հայաստանում քրեածին իրավիճակը, հանցագործությունների թիվը, այդ թվում՝ ծանր հանցագործությունների, մտահոգիչ է: Ապրիլի 23-ին, ոստիկանության աշխատանքի հետ կապված, մի շարք հարցադրում էի արել ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանին: Ապրիլի 30-ին ՆԳ նախարարությունից հայտնել էին, որ իմ կողմից հայցվող տեղեկությունը պարզելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ուստի տեղեկատվությունը կտրամադրվի 30-օրյա ժամկետում: Հարցմանս պատասխանը ստացել եմ հունիսի 8-ին:

Նախարար Ա. Սարգսյանին հարց էի ուղղել. «2018, 2020 եւ 2025 թվականների արդյունքներով ՀՀ-ում որքա՞ն է եղել հանցագործությունների, այդ թվում՝ ծանր հանցագործությունների թիվը»: Նախարարությունից հայտնել են. «2018 թվականին ՀՀ-ում արձանագրվել է 24 հազար 678 հանցագործության դեպք, որոնցից 14.7%-ը ծանր հանցագործության դեպքեր են, 2020 թվականին արձանագրվել է 26 հազար 468 հանցագործության դեպք, որոնցից 15.4%-ը ծանր հանցագործության դեպքեր են, իսկ 2025 թվականին արձանագրվել է 40 հազար 722 հանցագործության դեպք, որոնցից 12.6%-ը ծանր հանցագործության դեպքեր են»:

Այսինքն, 2018 թվականի համեմատ 2025-ին ՀՀ-ում հանցագործությունների թիվն ավելացել 16 հազար 44-ով, ինչը շատ մեծ թիվ է: Կարծիք կա, որ հանցագործությունների թվի աճին նպաստում է ոստիկանության կողմից հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ վատ աշխատանքը, ոստիկանության գործակալական ցանցի թույլ լինելը, ոստիկանության բաժիններում քրեական օպերլիազորների հաստիքների վերացումը: Նախարար Ա. Սարգսյանին հարցրել էի նաեւ. «Համայնքային ոստիկանության բաժիններում քրեական օպերլիազորների հաստիքները ո՞ր թվականին են կրճատվել, ի՞նչ հիմնավորմամբ, այդ կրճատումը դրական՝ թե՞ բացասական է ազդել հանցագործությունների կանխարգելման եւ բացահայտման վրա»:

Նախարարությունից պատասխանել են. «Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2024 թվականի նոյեմբերի 15-ի «Ոստիկանության բարեփոխումների իրականացման ռազմավարությունը եւ դրանից բխող 2024-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1803-Լ որոշումը՝ ՀՀ ՆԳՆ համակարգում իրականացվող կառուցվածքային փոփոխությունների գործընթացով պայմանավորված՝ 2024 թվականին ստեղծվել են ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչությունը եւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչությունը: Ոլորտում իրականացված փոփոխությունները բխում են ՀՀ կառավարության բարեփոխումների օրակարգից եւ ուղղված են համակարգի արդյունավետության բարձրացմանը՝ ունենալով երկարաժամկետ ազդեցություն: Այդ համատեքստում արձանագրվել է հանցավորության 3,2 տոկոս նվազում, ինչը նաեւ վկայում է իրավապահ համակարգի աշխատանքի արդյունավետության մասին»:

Հարց է ծագում. ոստիկանական համակարգում կառավարության բարեփոխումների արդյունքները, դրանց երկարատեւ ազդեցությունը հանրությանը ճիշտ են տեսանելի լինելու: Հանցավորությունը ո՞ր թվականի համեմատ է 3,2 տոկոսով նվազել, եթե Նիկոլ Փաշինյանի իշխանության 7 տարիներին՝ 2018-2025թթ., հանցագործությունների քանակն ավելի քան 16 հազարով ավելացել է:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՉՈՐՍ ՍՏՈՒԳՈՒՄ, ՈՐՈՆՑԻՑ ՎԱԽԵՆԱԼՈՒ ՊԱՏՃԱՌ ՉՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սոցիալական ցանցերում մեկը մյուսին մեղադրում է ստելու, կեղծելու, խաբելու մեջ: Բայց կա մի պարզ հարց. միթե հնարավոր չէ ճշմարտությունը պարզել: Ընտրությունների նկատմամբ վստահությունը կառուցվում է ոչ թե պաշտոնական հայտարարություններով, այլ ստուգելի փաստերով: Եթե կան հարցեր, որոնք հնարավոր է ստուգել, բայց չեն ստուգվում, ապա հասարակությունն իրավունք ունի շարունակել կասկածել: Իմ դիտարկումներով՝ այսօր գոյություն ունի առնվազն չորս հարց, որոնց պատասխանները հնարավոր է ստանալ փաստաթղթերի, տվյալների համադրմամբ եւ տեխնիկական վերլուծությամբ: Եթե իշխանությունը վստահ է արդյունքների օրինականության մեջ, թող բացի տվյալները: Եթե ընդդիմությունը վստահ է իր մեղադրանքների մեջ, թող պահանջի ամբողջական ստուգում: Եթե նշված չորս ուղղություններով ստուգումներ չեն կատարվում, հասարակությունն իրավունք ունի շարունակել կասկածել:

Առաջին հարցը. մահացածները չեն ընտրում, այդ դեպքում ինչո՞ւ են ցուցակներում

Մահվան փաստը գրանցվում է պետական ռեգիստրներում, ապա ինչո՞ւ է մարդու անունը մնացել ընտրացուցակում: Այդ մարդկանց անվան դիմաց կամ մասնակցության նշումներ, ստորագրություններ: Նրանք «մասնակցե՞լ» են ընտրություններին: Ես փորձեցի պարզել՝ արդյոք իմ ծնողների անվան դիմաց ստորագրություններ կայի՞ն: Ինձ թույլ չտվեցին ծանոթանալ քվեարկության մատյանին, ինչը կասկածի տեղիք է տալիս: Հասարակությունն իրավունք ունի ստանալ հստակ պատասխան: Այս հարցը կարելի է լուծել շատ պարզ ճանապարհով: Ընդդիմությունը, դիտորդները պետք է պահանջեն մահացած քաղաքացիների տվյալների համադրում ընտրություններին մասնակցած անձանց ցուցակների հետ: Եթե ոչ մի համընկնում չի հայտնաբերվում՝ հրաշալի: Եթե հայտնաբերվում են, ապա հանրությունը պետք է իմանա այդ մասին, որովհետեւ ժողովրդավարությունը չի կարող հիմնվել «հավատացեք մեզ» սկզբունքի վրա:

Երկրորդ հարցը. կրկնակի եւ բազմակի քվեարկությունների հնարավորությունը

Տարիներ շարունակ ընտրություններից հետո հնչել են կասկածներ կրկնակի կամ բազմակի քվեարկությունների վերաբերյալ: Այսօր նման ստուգումը տեխնիկական առումով չափազանց պարզ է: Բավական է համադրել ընտրությանը մասնակցած քաղաքացիների ամբողջական ցուցակները միմյանց հետ: Եթե նույն անձը հայտնվում է մեկից ավելի տեղամասերում, համակարգը դա կգտնի: Այն, ինչ մի ժամանակ ամիսների աշխատանք էր պահանջում, այսօր կարող է իրականացվել ժամերի ընթացքում: Ուրեմն ինչո՞ւ դա չի արվում: Եթե կրկնվող ստորագրություններ չկան, ապա իշխանությունը միայն կշահի այդ ստուգումից: Եթե կան, հասարակությունը պետք է իմանա դրանց ծագումը:

Երրորդ հարցը. զինվորականների քվեարկությունները

Ընտրություններից հետո հանրության ուշադրությունը գրավեցին զինվորականների մասնակցության վերաբերյալ տեղեկությունները: Հատկապես քննարկվում էին որոշ տեղամասերում ուշ ժամերին արձանագրված քվեարկությունները: Կարելի է անվերջ վիճել քաղաքական գնահատականների շուրջ: Բայց շատ ավելի օգտակար է ստուգել փաստերը: Եթե առկա են ընտրողների ամբողջական ցուցակները, ապա հնարավոր է պարզել՝ արդյոք որեւէ զինվոր հայտնվե՞լ է մեկից ավելի տեղամասում: Եթե պարզվի՝ ոչ, ապա ստուգումը միայն կուժեղացնի վստահությունը:

Չորրորդ հարցը. Թուրքիայում տպագրված հայկական անձնագրերի պատմությունը

Մի քանի տարի առաջ հանրությունը տեղեկացավ Թուրքիայում տպագրված հայկական անձնագրերի աղմկահարույց պատմության մասին: Տեղեկություններ հրապարակվեցին, քննարկումներ եղան, քրեական գործերի մասին խոսվեց: Հետո կեսբերան հերքումներ տարածեցին, ու լռություն տիրեց: Բայց հարցերը մնում են անպատասխան: Ի՞նչ անձնագրեր էին դրանք, քննություն ընթացա՞վ: Բացահայտվե՞լ են պատասխանատուները, թե՞ ամեն ինչ ծածկադմփոց արեցին՝ գնաց: Եթե պատմությունն ավարտված է, հասարակությունն իրավունք ունի ծանոթանալ արդյունքներին: Ամենակարեւորը՝ նման հարցերի շուրջ լռությունը չի վերացնում կասկածները:

Խոսք ընդդիմությանը

Հարգելի ընդդիմադիր գործիչներ, հազարավոր մարդիկ ձեզ հավատացել են, եկել են ձեր հետեւից: Հազարավոր մարդիկ իրենց ձայնը տվել են այն համոզմամբ, որ դուք պայքարելու եք մինչեւ վերջ: Ուրեմն մի՛ սահմանափակվեք հայտարարություններով: Մի՛ բավարարվեք մամուլի ասուլիսներով: Պահանջեք տվյալներ, համեմատական վերլուծություններ արեք: Պահանջեք փորձաքննություններ: Պահանջեք ստուգել յուրաքանչյուր կասկածելի հանգամանք: Եթե չեք պահանջում ստուգում, հասարակությունն իրավունք ունի հարցնելու՝ ինչո՞ւ: Ժողովրդավարությունը չի սկսվում քվեատուփի մոտ եւ չի ավարտվում ընտրությունների օրը: Ժողովրդավարությունը շարունակվում է ընտրություններից հետո եւ հաջորդ ընտրություններից շատ առաջ, քաղաքացին պահանջում է պատասխաններ, իշխանությունն ու ընդդիմությունը պարտավոր են դրանք տալ:

Արհեստական բանականությունը կարող է օգնել

Այսօր հաճախ խոսում են ԱԲ-ի վտանգների մասին, սակայն այն կարող է ծառայել նաեւ ժողովրդավարությանը: Տվյալների խոշոր բազաների համեմատությունը, կրկնությունների որոնումը, մահացած անձանց տվյալների համադրումը, ընտրողների ցուցակների ստուգումը կարող են ժամանակակից համակարգերը կատարել շատ արագ: Եթե համապատասխան տվյալներ տրամադրվեն իրավասու մասնագետներին, հնարավոր կլինի ստանալ առավել հստակ պատկեր եւ պատասխանել բազմաթիվ հարցերի, որոնք տարիներ շարունակ հասարակության մեջ անվստահություն են ծնում:

Ընտրություններն ավարտվել են: Հաղթողները շտապում են հայտարարել ժողովրդական վստահության մասին, պարտվածները՝ խախտումների:



Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ՄԱԿՐՈՆՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ՞ ԻՐ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ ԻՆՔՆ ԻՐԵՆ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼՈՒ

Ընտրությունների քվեարկությունը դեռ մի քանի ժամ էր, ինչ ավարտվել էր, երբ Վրաստանի նախագահ Իրակլի Կոբախիձեն շտապեց շնորհավորել Նիկոլ Փաշինյանին՝ «հաղթանակի» կապակցությամբ: Վրացական աղբյուրները հայտնում են, որ Վրաստանը «ստանալիք» ունի Հայաստանից՝ տարածքներ Լոռու մարզից, որի վրա վաղուց աչք ունի: «Սրտանց շնորհավորում եմ վարչապետ Նիկոլ Փաշինյանին եւ նրա կուսակցությանը՝ ընտրություններում ձեռք բերված հաջողության կապակցությամբ: Ակնկալում եմ շարունակել մեր սերտ համագործակցությունը՝ ավելի ամրապնդելու Վրաստանի եւ Հայաստանի միջեւ ռազմավարական գործընկերությունն ու բարեկամական հարաբերությունները՝ ի շահ մեր ժողովուրդների»,- գրել է Կոբախիձեն: Վրաստանի նախկին նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին Փաշինյանին ավելի վաղ էր շնորհավորել՝ ընտրությունների հաշվարկից մոտ 2-3 ժամ անց, երբ հաշվված էր քվեների ընդամենը 5 տոկոսը: Նիկոլ Փաշինյանին շնորհավորել է նաեւ Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին: «Շնորհավորում եմ Հայաստանին՝ ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու համար, ինչպես նաեւ Նիկոլ Փաշինյանին՝ տարած հաղթանակի առթիվ: Սա նաեւ հաղթանակ է Հայաստանի սուվերենության, անկախության եւ ապրելու իր ուղին ընտրելու իրավունքի համար:

Մենք ձեզ հաջողություն ենք մաղթում: Ուկրաինան պատրաստ է ընդլայնել մեր համագործակցությունը, եւ հիմա հենց այն ժամանակն է, որ Եվրամիությունն իրական աջակցություն ցուցաբերի Հայաստանին եւ անի անհրաժեշտ ամեն ինչ, որպեսզի մարդիկ զգան, որ իրենց կյանքն ավելի լավն է՝ Եվրոպայի հետ իրենց հարաբերությունների շնորհիվ: Սա փորձություն է Եվրամիության համար: Կարեւոր է չկորցնել ժամանակը կամ բաց չթողնել հնարավորությունները»,- գրել է նա:

Չնայած ընտրություններից առաջ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել էր, որ աջակցում է Փաշինյանին, սակայն ոչ թե Թրամփը, այլ ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն է շնորհավորել Փաշինյանին: Շնորհավորել են նաեւ Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը, Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանը, Եվրահանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լեյենը, արեւմտյան երկրների ղեկավարները:

Քաղաքական գործիչ **Նաիրա Զոհրաբյանը**, մեզ հետ զրույցում խոսելով այս շնորհավորական ուղերձների մասին, նկատում է. «Վրաստանի վարչապետը շնորհավորեց այն ժամանակ, երբ հաշվարկն ընթացքի մեջ էր: Ես չեմ ուզում դա կապել այն տեղեկությունների հետ, որ Լոռու մարզից Վրաստանին տարածքներ պետք է հանձնվեն: Ի դեպ, այդ տեղեկությունները շրջանառության մեջ է դրել վրացական կողմը: Ես չգիտեմ, թե որն էր Կոբախիձեի այդ քայլի մոտիվացիան, սակայն ինձ համար հասկանալի է, թե որն է եվրոպական լիդերների մոտիվացիան: Նրանք այս ընտրության «ճարտարապետն» են, նրանք այն ուժերն են, ովքեր այս բոլոր անօրինականությունների վրա աչք փակեցին: Նիկոլի «հաղթանակը» Ուրսուլա ֆոն դեր Լեյենի, Մակրոնի եւ մյուսների հաղթանակն էր: Այս մարդիկ շնորհավորում են իրենք իրենց: Սա նաեւ Ադրբեջանի եւ Թուրքիայի հաղթանակն էր: Մենք տեսանք այնպիսի մարդկանց շնորհավորանքներ, ովքեր պետք է առաջին հերթին Ադրբեջանին շնորհավորեին: Արեւմուտքի միջամտությունն ակնհայտ էր, նրանք իրենց քարզչությամբ, իրենց լռությամբ նպաստեցին այս ամենին: Հայաստանում բռնաճնշումներ էին թե ընտրություններից առաջ, թե հենց ընտրության օրը, բայց ոչ մի կերպ այս ամենը չդատապարտեցին: Նիկոլի բառամթերքը, հայտարարությունները չարժանացան որեւէ գնահատականի: Շրիշակի մակարդակից էլ ցածր քարոզարշավ էր, կզացնելու եւ սատկացնելու սպառնալիքներ էլ հնչեցին, որոնք ուղղակի քրեական հանցագործություն կարելի է դիտարկել, սակայն ոչ մի խոսք: Ամեն անգամ այդ ամենը լսելիս ես մի բան էի մտածում՝ պատկերացնո՞ւմ եք, եթե այս ամենը լիներ Սերժ Սարգսյանի ժամանակ: Անգամ եթե մի շարքային պատգամավոր այսպիսի սլենգ օգտագործեր, 3 վայրկյան անց «Զվարթնոց» օդանավակայանում վայրէջք կկատարեր ԵԽԽՎ Հայաստանի հարցով համազեկուցողների չարտերային ինքնաթիռը, եւ հարյուրավոր բանաձեւեր ու հայտարարություններ կերկնեին՝ բռնության կոչերի համար: Այս տոտալ անարխիան, լռությունը մեկ բան են նշանակում, որ այս մարդիկ իրենք իրենց են շնորհավորում, իրենց իսկ հաղթանակի համար: Այս մարդիկ լուրջ ջանքեր ու ռեսուրսներ են ներդրել, փակել են բոլոր միջազգային իրավապաշտպան կառույցների բերանները, որպեսզի նրանք էլ չտեսնեն ու չլսեն այս ամենը: Հիմա Մակրոնը չունի՞ իրավունք՝ իր կատարած աշխատանքի համար ինքն իրեն շնորհավորելու»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԵՐԵՎԱՆՆ ԱՅԺՄ ՈՉ ՄԻ ԵԼՔ ՉՈՒՆԻ. ՆՈՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ ԲԱՔՎԻՑ

Ողջ նախընտրական փուլում ադրբեջանական մասմեդիան անթաքույց կերպով համակրանք եւ աջակցություն էր դրսեւորում Փաշինյանի եւ նրա թիմի նկատմամբ՝ հույս փայփայելով, որ նա կվերարտադրվի: Արդյունքների հրապարակումից հետո հարեւան երկրի քարոզչակայքերը ողողված են Փաշինյանի «հաջողությունների» մասին ցնծագին հրապարակումներով: Նրա հաղթանակը կապել են իրենց երկրի բռնապետի անձնական գործոնի հետ՝ հավաստելով, որ Փաշինյան-Ալիեւ «խաղաղասեր» տանդեմը տարածաշրջանում «անշրջելի» գործընթացներ է գեներացրել: «Հայաստանում խորհրդարանական ընտրությունները ոչ միայն երկրի ներքին հարց էին, այլեւ տարածաշրջանային փոփոխությունների կարեւոր ցուցիչ: Դրանց արդյունքները կարելի է իրավացիորեն անվանել Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի ռազմավարական հաղթանակ: Քարոզարշավի հիմնական գործոնն Ադրբեջանի առաջնորդի անհատականությունն էր, նրա հետեւողական տարածաշրջանային քաղաքականությունը եւ դրան առնչվող խաղաղության օրակարգը Հայաստանի հետ հարաբերություններում»,- գրում է առաջատար Մինվալ. ազ-ը:

«Եթե Բաքվի կողմից տարածքային ամբողջականությունը վերականգնելու վճռական ռազմական, քաղաքական եւ դիվանագիտական քայլեր չլինեին, քիչ հավանական է, որ հայկական քաղաքական վերնախավն առաջնահերթություն տար խաղաղության եւ սահմանների ճանաչման սկզբունքին»,- գրում է հոդվածագիրը:

Ըստ հրապարակման, «հենց Ադրբեջանի հաջող քաղաքականությունն էր, որը ցույց տվեց նոր իրողությունների անշրջելիությունը, որը, վերջին հաշվով, որոշեց ընտրությունների արդյունքը: Հայ ժողովուրդը ճիշտ եզրակացություններ է անում վերջին տարիների իրադարձություններից եւ գիտակցում Ադրբեջանի հետ հարաբերությունները միջազգային իրավունքի հիման վրա կարգավորելու անխուսափելիությունը»: «Նիկոլ Փաշինյանի խաղաղության օրակարգը զգալի գործնական աջակցություն ստացավ նախագահ Իլհամ Ալիեւի քաղաքականության շնորհիվ: Վաշինգտոնում կայացած հանդիպումից հետո ստեղծվեցին սահմանին կայունություն ապահովելու իրական պայմաններ: Ադրբեջանն առաջարկեց վերացնել Հայաստանի համար տրանսպորտային սահմանափակումները, ստեղծել տարանցիկ միջանցքներ՝ երրորդ երկրներից բեռների համար, զարգացնել առեւտրային հարաբերությունները՝ առանց քաղաքական պայմանների, խթանել հարեւանի էներգետիկ անվտանգությունը, ակտիվացնել քաղաքացիական հասարակությունների միջեւ շփումները, փոխադարձ այցելությունները եւ զգալիորեն նվազեցնել ագրեսիվ հռետորաբանության մակարդակը: Այս քայլերը ցույց տվեցին Բաքվի պատրաստակամությունը՝ կառուցողական ներգրավվածության, եթե Երեւանը հրաժարվի իր ռեւանշիստական պատրանքներից»: Անդրադառնալով Բաքվի՝ ՀՀ-ում կայացած ընտրություններին հաջորդող ակնկալիքներին, ադրբեջանական իշխան